

10 Ապա մեծաւ ջանիւ հազիւ հաւանեցուցին զնա երթալ նմա ընդ նոսա ի բանական արքունի. զի յաւուրց ժամանակին ի մահուանէն Գնելոյ մինչեւ յայն ժամանակն թագաւորութեանն Պապայ ոչ էր երթեալ նա ի բանական արքունի: 11 Ապա յայնմ ժամանակի մեծաւ աղաչանաւք տարան զնա ի բանական արքունի ընդ ինքեանս. եւ նա էր նոցա վերակացու եւ խրատատու, կարգիչ եւ առաջնորդ. եւ հանապազ ինդրէր վասն նոցա յԱստուծոյ: 12 Եւ էր իմաստութեան իրաց առաջնորդ, եւ հանապազ կցորդ հոգոց եւ բարձիչ վշտաց աղաւթիւք իւրովք. եւ յամենայնի ամենայնիւ երբէք հայր երեւեալ:

13 Ապա կարգեր կազմեր յաւրիներ Մուշեղ սպարապետ զամենայն զգունդս Յայոց զաւրացն, եւ առներ հանդես ամենայն զաւրացն զնդին՝ որ հասին ի ձեռս նորա տասն հազար: 14 Եւ ածեր զամենայն հանդեսն կարգեալս եւ պատրաստեալս վառեալս ի պատերազմ, զորաւշս փողփողեալս եւ նշանս արձակեալս. եւ ցուցանէր զհանդես զաւրացն Յայոց սպարապետն Յայոց Մուշեղ առաջի իւրեանց թագաւորին Պապայ, եւ մեծի քահանայապետին Ներսեսի, եւ առաջի Տերենտի եւ Ադէի զաւրագլխացն Յունաց: 15 Եւ մեծ շնորհակալութիւն առներ նմա թագաւորն Պապ Յայոց, եւ մեծամեծ պարգեսս շնորհեր զաւրավարին Մուշեղի. եւ սոյնպէս զաւրագլուխքն Յոռոմոց շնորհակալ լինէին նմա: 16 Սոյնպէս եւ եպիսկոպոսապետն Ներսես աւրիներ զզաւրավարն Մուշեղ, եւ ասեր. Տեր Քրիստոս աւրինեսցէ զքեզ, եւ յաջողեսցէ քեզ, եւ տացէ քեզ զյաղթութեանն շնորհս զամենայն աւուրս կենաց քոց. ի ձեռն քո եւ ի ձեռն ազգի քո փրկեսցէ զերկիրս Յայոց մինչեւ յաւիտեան:

17 Ապա զաւրավարն Յայոց Մուշեղ գունդ կազմեաց պատրաստեաց, եւ յառաջեաց հանդերձ Յայոց զնդան. առաջապահ անցանէր առաջի թագաւորին Պապայ եւ զաւրացն Յունաց կայսերական զնդին: 18 Ապա ի Դարանաղեաց զաւառին լկնեալ յարձակեցաւ Մուշեղն, իբրեւ գայր¹ առառապահն հասանէր ի միջնաշխարհն Յայոց, սպանանէր Մուշեղ զզաւրագլուխն Պարսից զԿարենն եւ զՉիկն, եւ զամենայն զզաւրսն արկանէր ի սուր սուսերի իւրոյ, եւ ոչ մի զոք² ապրեցուցանէր: 19 Եւ մինչեւ ի բուն ի սահմանսն ի Գանձակ Ատրպատականի զերկիրն յիւր վտարեալ, բռնացեալ ունէր:

20 Եւ եկն եմուտ թագաւորն Պապ յերկիրն Յայոց, եւ թագաւորեաց ի վերայ նորա. եւ թափեաց յինքն զամուր ամուր բերդիցն, զոր կալեալ էր Պարսկացն. եւ բերդն Դարանից, որ է յերկրին Կոգայ, ուր կային գանձք Արշակունեացն սաստիկ յոյժ: 21 Քանզի դիպեցան մտերիմք բերդակալքն. զի թեպէտ ի ժամանակէն՝ իբրեւ տարան զթագաւորն Յայոց զԱրշակ ի Պարսս՝ յայնմ

1 Ի չորս օրինակս՝ Մուշեղն իբրեւ գայր

2 Օրինակ մի յաւելու՝ ոչ